



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2015 թվականի չորրորդ եռամսյակում (վերլուծություն)

2015 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 50586 գործարք, որոնց քանակը 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 8.1 %-ով, իսկ 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 13.3 %-ով:

2015 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 14602 օտարման գործարքի 71.8 %-ը կազմել է առուվաճառքը, 27.1 %-ը՝ նվիրատվությունը և 1.1 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 36.7 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 39.7 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2015 թվականի չորրորդ եռամսյակում, 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 13.9 %-ով, իսկ 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 3.4 %-ով:

2015 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 66.8 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2015 թվականի չորրորդ եռամսյակում, 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 7.0 %-ով, իսկ 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 2.1 %-ով:

2015 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Չորրորդ եռամսյակ 2014 թ.	Չորրորդ եռամսյակ 2015 թ.	Երրորդ եռամսյակ 2015 թ.
Կենտրոն	428000	428000	428000
Արաբկիր	356600	356700	356600
Քանաքեռ-Զեյթուն	282700	282800	282750
Նոր Նորք	252800	253600	253300
Ավան	260200	261100	260750
Էրեբունի	251000	252200	252100
Շենգավիթ	256700	257350	257300
Դավթաշեն	275200	276300	276050
Աջափնյակ	249600	250400	250250
Մալաթիա-Սեբաստիա	242500	243600	243400
Նուբարաշեն	156150	157000	156800
Միջինը Երևանում (բացի Նորք-Մարաշից)	273800	274500	274300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2015 թվականի չորրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով, 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել են 0.1 %-ով:

2015 թվականի չորրորդ եռամսյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 1100 բնակարան, որի քանակը, 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, աճել է 11.7 %-ով, իսկ 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 10.1 %-ով:

2015 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Չորրորդ եռամսյակ 2014 թ.	Չորրորդ եռամսյակ 2015 թ.	Երրորդ եռամսյակ 2015 թ.
Արագածոտն	Աշտարակ	116000	116000	116000
	Ապարան	57550	58050	57900
	Թալին	65900	66300	66200
Արարատ	Արտաշատ	97000	98150	97900
	Մասիս	115750	115800	115800
	Վեդի	100700	101500	101450
	Արարատ	75500	77100	76800
Արմավիր	Վաղարշապատ	154150	154100	154100
	Արմավիր	121200	121200	121200
	Մեծամոր	87500	87550	87550
Գեղարքունիք	Սևան	99200	99400	99400
	Գավառ	59850	60300	60200
	Մարտունի	107700	107700	107700
	Վարդենիս	44800	45000	44900
	Ճամբարակ	28700	28750	28700
Լոռի	Վանաձոր	88500	88500	88500
	Ստեփանավան	74500	74600	74600
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	55050	55400	55300
	Տաշիր	47300	47350	47350
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20300	20500	20500
Կոտայք	Աբովյան	155100	155100	155100
	Նոր Հաճն	128600	128550	128550
	Բյուրեղավան	108150	108200	108200
	Եղվարդ	109400	109500	109400
	Հրազդան	63850	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292400	292400
	Չարենցավան	85550	85500	85500
Շիրակ	Գյումրի	109300	109250	109250
	Արթիկ	66700	66900	66800
	Մարալիկ	40700	40900	40800
Սյունիք	Գորիս	122500	123250	123000
	Կապան	93150	94350	94100
	Սիսիան	91300	92000	92000
	Մեղրի	81000	82500	82200
	Ագարակ	46900	47400	47300
	Քաջարան	94700	94650	94600
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95000	95000	95000
	Եղեգնաձոր	125550	125800	125600
	Ջերմուկ	112950	112950	112950
Տավուշ	Դիլիջան	113600	115200	114350
	Իջևան	118300	118450	118400
	Բերդ	60250	60300	60300
	Նոյեմբերյան	49900	50200	50150
	Այրում	31850	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2015 թվականի չորրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

2015 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 1261 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 432 գործարք, մարզերում՝ 829 գործարք: 2015 թվականի չորրորդ եռամսյակում, 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 19.6 %-ով, ընդ որում, Երևանում՝ 45.0 %-ով, մարզերում՝ 9.7 %-ով, իսկ 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 15.5 %-ով, ընդ որում, Երևանում՝ 2.3 %-ով, իսկ մարզերում՝ 21.0 %-ով:

2015 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Չորրորդ եռամսյակ 2014 թ.	Չորրորդ եռամսյակ 2015 թ.	Երրորդ եռամսյակ 2015 թ.
Կենտրոն	476100	476100	476100
Արաբկիր	383000	383000	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319200	319200
Ավան	270500	270500	270500
Էրեբունի	239750	239750	239750
Շենգավիթ	255000	255000	255000
Դավթաշեն	276000	276000	276000
Աջափնյակ	250050	250050	250050
Մալաթիա-Սեբաստիա	238000	238000	238000
Նուբարաշեն	150800	150800	150800
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	286700	286700	286700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2015 թվականի չորրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

2015 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Չորրորդ եռամսյակ 2014 թ.	Չորրորդ եռամսյակ 2015 թ.	Երրորդ եռամսյակ 2015 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136200	136200
	Ապարան	60050	60050	60050
	Թալին	69250	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000	100000
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100	153100
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94950	94850
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96100	96100
	Վարդենիս	41000	41100	41000
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100000	100800	100550
	Ստեփանավան	90000	91100	91000
	Սպիտակ	114000	114000	114000
	Ալավերդի	50200	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157000	157300	157200
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	118500	119250	119050
	Արթիկ	63100	63300	63100
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000	130000
	Կապան	100000	100650	100500
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84500	84600	84500
	Ագարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11610	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90050	90150	90100
	Եղեգնաձոր	116600	116750	116650
	Զերմուկ	131300	131300	131300
Տավուշ	Դիլիջան	113000	115400	115000
	Իջևան	123200	123200	123200
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ

Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել է 5188 միավոր (2591.28 հա) հող, որից Երևանում՝ 293 միավոր (24.04 հա): Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 3086 միավոր (2405.95 հա), որից Երևանում՝ 16 միավոր (2.54 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 1451 միավոր (120.55 հա), որից Երևանում՝ 145 միավոր (8.95 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 489 միավոր (42.53 հա), որից Երևանում՝ 121 միավոր (11.62 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 49 միավոր (13.13 հա), որից Երևանում՝ 11 միավոր (0.93 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 17 միավոր (5.19 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 93 միավոր (3.27 հա),
- ջրային հող՝ 2 միավոր (0.01 հա),
- անտառային հող՝ 1 միավոր (0.65 հա) ընդհանուր մակերեսով:

2015 թվականի չորրորդ եռամսյակում օտարված հողերից 4306 միավորի (2244.37 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 221 միավոր (17.84 հա), նվիրատվության գործարք՝ 811 միավոր (335.46 հա), որից Երևանում՝ 67 միավոր (6.17 հա) և փոխանակության գործարք՝ 71 միավոր (11.45 հա), որից Երևանում՝ 5 միավոր (0.03 հա):

Հանրապետությունում 2015 թվականի չորրորդ եռամսյակում 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակն աճել է 8.6 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակն աճել է 15.0 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 2.0 %-ով, իսկ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 18.9 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 493.90 հա, որից 473.21 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 30.4 %-ը կամ 1307 միավորը (512.18 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 75 միավոր (5.27 հա), իսկ 69.0 %-ը կամ 2970 միավորը (1730.52 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 142 միավոր (12.50 հա): 2015 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 29 գործարք (1.67 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարք:

Ստորև ներկայացված է 2015 թվականի չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների,

հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային, անտառային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	2	0.13	34	1.65	39	3.49	8	0.72	8	0.77	73	5.51	53	5.50
Արագածոտն	65	62.80	0	0.00	9	0.98	7	8.83	208	239.73	1	0.01	56	7.25	6	0.78
Արարատ	74	98.24	2	0.37	98	8.42	57	3.49	246	132.83	0	0.00	108	9.65	14	0.73
Արմավիր	13	31.74	3	0.63	3	0.30	8	0.22	312	441.47	0	0.00	170	19.18	9	0.37
Գեղարքունիք	16	7.61	2	0.26	20	1.86	17	1.68	198	102.75	0	0.00	36	5.30	7	0.32
Լոռի	10	4.68	6	6.70	17	0.28	38	1.68	464	255.15	1	0.01	25	2.73	8	0.17
Կոտայք	94	167.13	5	0.25	263	4.27	35	0.78	263	177.60	2	0.09	158	21.91	22	1.88
Շիրակ	98	33.74	2	1.21	21	0.35	38	2.28	181	187.13	2	0.16	41	3.93	6	0.38
Սյունիք	8	29.83	1	0.09	13	0.38	7	1.38	124	66.85	1	0.51	27	2.04	1	0.08
Վայոց ձոր	22	11.83	1	0.57	2	0.01	5	0.18	40	13.95	0	0.00	7	0.72	4	0.24
Տավուշ	15	6.26	3	0.27	8	0.21	24	0.45	48	15.52	0	0.00	22	1.68	4	2.01
Ընդամենը	415	453.86	27	10.48	488	18.71	275	24.46	2092	1633.70	15	1.55	723	79.90	134	12.46

Ստորև ներկայացված է 2015 թվականի չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Գյուղ. նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	37	0.62	1	0.03	18	0.28	18	0.31	38	4.65	0	0.00	1	0.11	16	1.36	21	3.18
Արագածոտն	1	0.02	0	0.00	1	0.02	0	0.00	78	72.54	63	62.74	0	0.00	8	0.97	7	8.83
Արարատ	6	0.063	0	0.00	1	0.003	5	0.06	222	109.78	71	97.56	2	0.37	97	8.42	52	3.43
Արմավիր	2	0.02	0	0.00	0	0.00	2	0.02	23	17.06	11	15.94	3	0.63	3	0.30	6	0.19
Գեղարքունիք	6	0.074	0	0.00	5	0.07	1	0.004	48	10.14	15	6.41	2	0.26	15	1.80	16	1.67
Լոռի	13	0.08	0	0.00	1	0.01	12	0.07	58	13.26	10	4.68	6	6.70	16	0.27	26	1.61
Կոտայք	186	0.723	1	0.003	179	0.67	6	0.05	210	171.23	93	166.65	4	0.25	84	3.60	29	0.73
Շիրակ	39	3.13	2	1.21	10	0.13	27	1.79	34	4.09	12	3.37	0	0.00	11	0.23	11	0.49
Սյունիք	14	0.62	1	0.09	9	0.16	4	0.37	15	31.06	8	29.83	0	0.00	4	0.22	3	1.01
Վայոց ձոր	2	0.572	1	0.57	1	0.002	0	0.00	27	11.87	21	11.68	0	0.00	1	0.01	5	0.18
Տավուշ	4	0.10	0	0.00	3	0.09	1	0.01	46	7.07	15	6.26	3	0.27	5	0.11	23	0.43
Ընդամենը	310	6.02	6	1.90	228	1.44	76	2.68	799	452.75	319	405.12	21	8.59	260	17.29	199	21.75

2015 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 96 գործարք (48.72 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2015 թվականի չորրորդ եռամսյակում, 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 20.9 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 17.4 %-ով, իսկ մարզերում՝ աճել է 23.7 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 44.3 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 9.7 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 11.8 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 8.7 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2015 թվականի չորրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	51	47.43	36.8	1886.2	371.2	114	64.31	365.0	12000.0	3743.3
Ապարան						13	9.84	86.5	2727.3	641.2
Թալին	12	15.31	9.5	400.0	238.5	50	85.66	93.6	5494.5	818.5
Ծաղկահովիտ						22	78.14	79.5	1000.0	362.7
Արարատի մարզ										
Արտաշատ	27	22.83	87.2	5132.5	1925.0	106	37.78	335.1	10833.3	2644.3
Մասիս	20	17.37	60.3	2323.1	766.6	40	38.45	200.0	11904.8	3126.3
Վեդի	24	57.37	63.2	1168.2	395.5	98	54.07	207.0	10795.1	1927.8
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	1.41	84.0	104.9	93.9	148	151.19	294.3	9090.0	1269.7
Բաղրամյան						54	182.51	90.6	2561.1	928.1
Վաղարշապատ	8	14.53	71.6	1680.6	597.9	108	87.27	444.4	11764.7	1957.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	1.00	561.0	561.0	561.0	109	39.85	199.8	1875.0	475.0
Ճամբարակ						1	0.73	60.5	953.3	352.0
Մարտունի	14	5.41	64.6	2083.3	641.7	37	4.46	51.1	2850.0	821.5
Սևան						17	5.34	52.2	2134.8	352.2
Վարդենիս						34	52.37	41.2	2575.1	425.0
Լոռու մարզ										
Ալավերդի	2	0.24	457.1	487.0	472.1	31	19.54	170.4	6424.2	593.5
Գուգարք	2	0.25	172.5	1454.9	813.7	81	23.99	234.6	6065.9	820.9
Սպիտակ	1	0.13	1248.6	1248.6	1248.6	11	2.35	250.0	5555.5	678.3
Ստեփանավան	3	1.53	169.8	1133.3	667.7	29	20.17	90.6	1686.6	408.3
Տաշիր	2	2.53	812.2	1127.5	969.8	315	189.10	45.3	1384.4	184.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	37	52.65	78.6	2714.3	570.8	74	28.91	279.3	11942.7	3934.2
Եղվարդ	47	109.92	92.0	6326.5	647.0	153	129.87	174.4	11971.8	2470.8
Հրազդան	9	4.08	107.5	973.8	643.4	31	16.44	130.5	10256.4	1083.3

Շիրակի մարզ										
Ախուրյան	3	1.32	294.6	388.1	327.9	64	74.24	252.0	1693.1	638.6
Ամասիա						5	12.92	40.9	261.0	135.8
Անի	9	2.05	345.0	828.0	534.8	84	68.58	110.6	546.9	454.9
Աշոցք						1	3.27	58.5	215.8	138.5
Արթիկ						24	26.78	79.4	1428.6	509.9
Սյունիքի մարզ										
Գորիս						14	15.05	92.6	1023.2	800.0
Կապան	4	2.78	357.9	1300.0	694.9	31	17.15	120.0	841.6	402.3
Մեղրի	4	27.06	137.5	418.8	254.8	44	17.60	193.0	3000.0	764.5
Սիսիան						35	17.05	46.3	1977.4	617.1
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	19	7.39	21.7	1332.0	418.1	29	10.87	125.0	10000.0	1793.0
Վայք	2	4.29	757.4	757.4	757.4	10	2.85	58.8	1430.7	576.7
Տավուշի մարզ										
Բերդ						26	6.70	213.3	3783.8	670.0
Իջևան	14	6.04	154.4	2400.0	1021.0	17	6.07	267.5	9454.5	1466.7
Նոյեմբերյան	1	0.22	1034.8	1034.8	1034.8	5	2.74	46.7	7368.4	985.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2015 թվականի չորրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	7	7747.6	112.7	2278.7	1165.7	44	49553.0	130.7	22200.0	2590.3
Ապարան						1	3390.0	124.1	609.6	390.3
Թային	1	1929.0	151.2	151.2	151.2	8	11478.3	63.2	1454.8	152.3
Ծաղկահովիտ						2	7815.0	60.0	214.3	93.5
Արարատի մարզ										
Արտաշատ	53	47514.6	175.0	5488.4	610.5	25	26031.0	173.9	7140.3	905.1
Մասիս	41	34140.9	799.6	3721.3	2659.3	54	40029.3	187.5	25000.0	1208.9
Վեդի	3	2547.0	150.5	164.0	157.3	28	29462.0	126.1	5000.0	663.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						66	70388.0	131.6	9090.9	1215.4
Բաղրամյան	3	3000.0	222.0	234.0	230.0	5	12286.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						95	104621.0	197.4	26528.4	1531.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	3296.0	270.0	270.0	270.0	4	4301.0	186.6	1084.3	684.0
Ճամբարակ						2	4018.0	71.3	2286.2	146.8
Մարտունի	7	7044.0	73.5	326.0	202.4	16	21744.6	119.3	5000.0	280.3
Սևան	4	5662.5	411.0	413.8	412.0	3	2765.6	240.0	3110.4	334.8
Վարդենիս	3	1981.6	266.4	600.0	433.2	10	19425.3	72.5	987.2	150.3
Լոռու մարզ										
Ալավերդի	5	434.8	388.5	2200.0	1409.8	11	11424.9	114.3	1388.9	216.8

Գուգարք	11	2236.3	2009.7	4750.4	2528.5	8	8990.6	77.9	14083.3	1260.1
Սպիտակ						3	3910.0	104.9	1348.3	204.0
Ստեփանավան						2	1660.0	88.2	1666.7	175.5
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	59	16333.6	410.5	5438.0	3699.2	75	148544.9	264.5	35353.5	1966.0
Եղվարդ	21	18051.4	425.2	3234.0	2182.7	67	55063.0	173.6	27000.0	2859.8
Հրազդան	4	1621.0	397.5	3240.0	2387.2	14	14150.0	117.7	34848.5	1318.7
Շիրակի մարզ										
Ախուրյան	7	1591.5	2628.7	10500.0	5616.9	22	15448.7	113.6	18750.0	335.4
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի	3	590.6	244.2	1026.7	517.2	14	18012.6	67.9	180.6	202.3
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ	1	78.8	340.7	340.7	340.7	2	1810.0	111.8	5000.0	218.5
Սյունիքի մարզ										
Գորիս						5	5130.0	112.2	1700.0	364.8
Կապան	1	600.0	1495.0	1495.0	1495.0	6	4078.2	67.9	2638.9	350.3
Մեղրի	1	277.3	318.1	318.1	318.1	9	6401.0	68.5	632.9	260.3
Սիսիան	2	1340.0	393.3	461.7	427.5	7	4752.0	123.5	875.0	245.8
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						6	5614.0	96.7	7659.6	508.3
Վայք	1	120.0	875.0	875.0	875.0	1	1550.0	120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ						2	531.2	75.8	810.0	125.3
Իջևան	3	492.3	992.5	3000.0	1603.4	17	12223.2	74.1	14423.1	516.8
Նոյեմբերյան	2	643.0	465.8	932.2	700.0	3	4025.8	125.0	1948.1	250.7

2015 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1968 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.9 %-ը:

2015 թվականի չորրորդ եռամսյակում, 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 15.8 %-ով, իսկ 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 8.2 %-ով:

2015 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 105 բնակարանի, 158 անհատական բնակելի տան, 953 հասարակական նշանակության, 171 արտադրական նշանակության օբյեկտի, 538 միավոր հողի, 41 ավտոտնակի և 2 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2015 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 28 վարձակալության գործարքի քանակը, 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, աճել է 33.3 %-ով, իսկ 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 55.6 %-ով:

2015 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 2244.31 հա հողից 8.31 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 2235.99 հա հողից 1782.62 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 428.17 հա արդյունաբերական օբյեկտի, 11.40 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտի հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց ձորի մարզում՝ 482.91 հա, որից 88.92 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5851 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.6 %-ը:

Գրավադրման գործարքից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, աճել է 28.7 %-ով, իսկ 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 13.7 %-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (48.0 %), անհատական բնակելի տների (19.8 %), հասարակական նշանակության օբյեկտների (10.8 %) և հողերի (16.7 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3021 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, աճել է 16.8 %-ով, իսկ 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 21.9 %-ով:

2015 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել է 1093.61 հա հող, որից 19.40 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 93.0 %-ը կամ 1016.74 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.10 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Արմավիրի մարզում՝ 440.87 հա, որից 438.80 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 447 գործարք, որից 305-ը՝ Երևանում: 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 10.4 %-ով, ընդ որում Երևանում՝ 12.1 %-ով, մարզերում՝ 6.8 %-ով, իսկ 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել է 0.2 %-ով, ընդ որում Երևանում՝ 1.9 %-ով, մարզերում՝ 3.6 %-ով:

2015 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 5975 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որի քանակը, 2015 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 16.1 %-ով, իսկ 2014 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 0.4 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 11.8 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (28.8 %):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե